ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 13/561 «02» 08 2024 թ.

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00067177)
ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
էլ. հասցե՝ el@sec.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 30.12.2020 թվականին կնքված «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով «Բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայությունների» ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում բազմիցս Կատարողին տրվել է նախազգուշացումներ՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու վերաբերյալ, ինչպես նաև տրվել է ողջամիտ /5 օր/ ժամկետ թերությունները վերացնելու համար, սակայն կազմակերպությունը միչև օրս պարտավորությունները չի իրականացրել պատշաճ և չկատարման վերաբերյալ չի ներկայացրել որևէ պարզաբանում:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագրային պարտավորությունները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ոստիկանության և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի միջև 30.12.2020 թվականին կնքված «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի ընկերության փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարության պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կներկայացվի լիազորված մարմին «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ա. Ֆիդանյան

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռ.՝ 010-59-68-57